

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ակների միջև. Դպրոց» ՊՈԱԿ-ի ներքոգրյալ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար.

Հայոց պատմություն--- 6 ժամ

Հեղ-----7ժամ

Ինֆորմատիկա-----7 ժամ

Ռուսոց լեզու----- --6 ժամ

Ֆիզկուլտուրա -----6 ժամ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 16.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա փաստաթղթերի ընդունման ավարտից հետո 3-րդ աշխատանքային օրը Ակների միջև. դպրոցում, հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Ակներ:

Տեղեկությունների համար զանգահարել (0284)2-77-46 կամ (077)177491 հեռախոսահամարներով:

Դպրոցի տնօրինություն